«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ
01.01.2023-31.03.2023թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ5)

Ծանոթագրություն 1. Կորպորատիվ տեղեկատվություն

«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 1996թ.-ին: Ընկերությունը տրամադրում է ոչ կյանքի ապահովագրությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում գտնվող գրասենյակում՝ Ա.Ավետիսյան 116/1 և 116/5 հասցեում:

Ընկերության բաժնեմասերի 60%-ը պատկանում է Լևոն Քոչարյանին (ՀՀ, ք. Երևան, Ձորափի փողոց 72ա), 40%-ը՝ Վահագն Խաչատրյանին (ՀՀ, ք. Երևան, Մանթաշյան փողոց, շ 51, բն.38):

Ընկերության կորպորատիվ կառավարման գործընթացը ավարտվել է, Ընկերությունում ներդրված են կորպորատիվ կառավարման սկզբունքները: 31.03.2023թ դրությամբ ընկերությունն ունի 5 անդամից բաղկացած խորհուրդ: Ընկերության կողմից հստակ տարանջատված են ընկերության խորհրդի, գործադիր մարմնի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները: Ընկերությունում ձևավորված է ներքին աուդիտի ստորաբաժանում:
Ընկերությունը ՀՀ տարածքում ունի 2 մասնաճյուղ:
31.03.2023թ-ի դրությամբ Ընկերությունն ունի 226 աշխատակից և 239 ապահովագրական գործակալ, որից 85-ը իրավաբանական անձ, 154-ը՝ Ա/Ձ՝:

Ծանոթագրություն 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմունքներ

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:
Հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ դրամն է:
Ներկայացված գումարները կլորացված են հազար դրամով:

Ծանոթագրություն 3 . Հաշվապահական հաշվառման գնահատականներ և դատողություններ

Հաշվապահական հաշվառման գնահատումներում փոփոխության հետևանքը ճանաչվում է առաջընթաց՝ արտացոլվելով փոփոխման ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, եթե փոփոխությունն ազդում է միայն հաշվետու ժամանակաշրջանի վրա կամ փոփոխման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջան-ներում, եթե փոփոխությունը երկուսի վրա էլ ազդում է

Ծանոթագրություն 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփում

Ապահովագրության պայմանագրեր
Ապահովագրության Պայմանագիրը պայմանագիր է, ըստ որի՝ կողմերից մեկը (ապահովագրողը) պայմանագրի մյուս կողմից (ապահովադրից) իր վրա է վերցնում նշանակալի ապահովագրական ռիսկ՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին, եթե սահմանված անորոշ ապագա դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա:
Տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ուժի մեջ մտած ապահովագրության պայմանագրերով նախատեսված ապահովագրավճարների վաստակած մասը ճանաչվում է որպես եկամուտ:

Վերաապահովագրական ակտիվներ
Ընկերությունը ստանձնած ռիսկերի գծով վնասները ծածկելու նպատակով վերաապահովագրում է իր կողմից ապահովագրած ռիսկերը:

Վերաապահովագրական պայմանագրերից ծագող ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում համապատասխան ապահովագրության պայմանագրերից ծագած ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի դիմաց:
Վերաապահովագրական պայմանագրերով սահմանված գումարները հաշվառվում են ապահովագրական պայմանագրերի հաշվառման սկզբունքներին համապատասխան: Վերաապահովագրավճարի գծով ծախսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, երբ փոխանցվում է վերաապահովագրված ռիսկը: Փոխանցված վերաապահովագրավճարների չծախսագրված մասը ներառվում է վերաապահովագրական ակտիվներում:
Վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն, որ Ընկերությունը կարող է չստանալ պայմանագրի պայմաններով իրեն հասանելիք բոլոր գումարները՝ որպես վերաապահովագրական ակտիվի սկզբնապես ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքի արդյունք:
Եթե վերաապահովագրության գծով ակտիվը արժեզրկված է, ապա Ընկերությունը նվազեցնում է դրա հաշվեկշռային արժեքը և արժեզրկումից կորուստը ճանաչում է շահույթում կամ վնասում:

Ոչ նյութական ակտիվներ
Ընկերության կողմից ձեռք բերվող ոչ նյութական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:
Ոչ նյութական ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների մաշվածության ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից:

Հիմնական միջոցներ
Ընկերության հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:
Հիմնական միջոցների մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման հանձնման ամսաթվից:
Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հետևյալներն են՝

Շենք-շինություններ	*20 տարի*
տնտեսական գույք	*5 տարի*
հաշվողական և համակարգչային սարքավորումներ	*1 տարի*
տրանսպորտային միջոցներ	*8 տարի*
այլ հիմնական միջոցներ	*5 տարի*
մինչև հիսուն հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցներ	*1 տարի*

Արտարժույթ
Արտարժույթով գործարքները տեղի ունենալու պահին գրանցվում են ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործառնության ամսաթվի դրությամբ սփոթ փոխանակման փոխարժեքը:
Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջին արտարժույթով դրամային հոդվածները վերա-հաշվարկվում են՝ կիրառելով փակման փոխարժեքը, իսկ ոչ դրամային հոդվածները պներկայացվում են գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքով:
Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ երբ դրամային հոդվածները վերահաշվարկվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնապես ճանաչման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում վերահաշվարկման փոխարժեքից, ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Հարկեր (ընթացիկ և հետաձգված)
Հարկի գծով ծախսը (հարկի գծով եկամուտը)՝ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի հաշվարկում ներառված համախառն գումարն է՝ ընթացիկ հարկի և հետաձգված հարկի գծով:
Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով շահութահարկի դրույքաչափը, որն ուժի մեջ է եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինի հաշվեկշռի ամսաթվի դրությամբ:
Հետաձգված հարկեր ճանաչվում են կապված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և դրանց հարկային բազայի միջև եղած տարբերություններներից:

Շահութահարկը ճանաչվում է շահույթ/վնասում:

Հակերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք ճանաչված են՝

ա/ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում,
բ/ ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են սեփական կապիտալում:

Բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքներ
Ընկերության սեփականատերերին բաշխումներ ճանաչված շահաբաժինների գումարը արտացոլվում է սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական գործիքներ
Ընկերության ֆինանսական գործիքները ներառում են դրամական միջոցները և դրանց համարժեքները, ապահովագրության գծով դեբիտորական պարտքերը, այլ դեբիտորական պարտքերը, տրամադրված փոխառությունները, ներդրումները, պահովագրության գծով և այլ կրեդիտորական պարտքերը, այլ պարտավորությունները:

Ֆինանսական ակտիվների ճանաչում, չափում
Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը ճանաչվում են ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ:
Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը կամ Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը այլ անձանց:
Ֆինանսական ակտիվները ճանաչվում են սկզբնական արժեքով, բացառությամբ՝ շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների, որոնք ճանաչվում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գնանշումների հիման վրա:
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացվող արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
Դրամական միջոցները և դրանց համարժեքները, դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացվող արժեքով:
Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմակերպությունը պետք է գնահատի, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկված է: Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ ամորտիզացված արժեքով հաշվառվող փոխառությունների և դեբիտորական պարտքերի կամ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն ՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով:
Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով զեղչված ապագա գնահատված դրամական հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:
Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթ/վնասում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները և ՀՀ ռեզիդենտ բանկերում ներդրված դրամական միջոցները: Ընկերությունը օտարերկրյա բանկերում ներդրված դրամական միջոցներ չունի:

Այլ ֆինանսական պարտավորություններ
Այլ ֆինանսական պարտավորությունները Ընկերության կողմից վճարման ենթակա գումարներն են, որոնք առաջանում են կրեդիտորներից ապրանքներ, ծառայություններ ձեռք բերելու հետևանքով:
Պարտավորությունը ճանաչվում է ֆինանսական հաշվետվություններում միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործարքի պայմանագրային կողմ:
Կրեդիտորական պարտքը սկզբնապես ճանաչվում է սկզբնական /հաշվում նշված/ արժեքով:
Կազմակերպությունը պետք է իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից հեռացնի ֆինանսական պարտավորությունը այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:
Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Պահուստներ
Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է:

Պահուստը պետք է ճանաչվի, երբ՝ կազմակերպությունն ունի ներկա պարտականություն որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և պարտականության գումարը հնարավոր է արժանավատորեն գնահատել:
Ապահովագրական պահուստները ձևավորվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված իրավական ակտերի, ինչպես նաև ՖՀՍՍ 17-ի պահանջների համաձայն:

Աշխատակիցներին հատուցումներ
Աշխատակիցներին հատուցումները ներառում են մասնավորապես աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները, ինչպիսիք են աշխատավարձը, սոցիալական ապահովության մասհանումը, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները, տարեկան արձակուրդները, ինչպես նաև ազատման նպաստները:
Աշխատակիցների հատուցումները ճանաչվում են ծախս այն ժամանակաշրջանում, երբ աշխատակիցները մատուցում են իրենց ծառայությունը Ընկերությանը:
Ընկերությունը կարող է փոխհատուցել աշխատակիցների բացակայությունները տարբեր պատճառներով, ինչպիսիք են արձակուրդը, անաշխատունակությունը, հիվանդությունը, ծննդաբերությունը:
Կազմակերպությունը պետք է չափի կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները որպես լրացուցիչ գումար, որը կազմակերպությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում
Ընկերությունը փոփոխում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը միայն այն դեպքում, եթե փոփոխություն է կատարվել հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ, կամ հանգեցնում է ֆինանսական հաշվետվություններում կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա գործառնությունների, այլ դեպքերի և իրադարձությունների ազդեցության վերաբերյալ առավել արժանահավատ և տեղին տեղեկատվության ներկայացմանը:

Ծանոթագրություն 5. Ապահովագրավճարների գծով հասույթ

31.03.2023թ դրությամբ

ՀՀ դրամ

Ապահովագրության դասեր	2023 թ կնքված պայմանագրերով նախատեսված համախառն ապահովագրավճար	ՉԱՊ-ի համախառն փոփոխություն	Դադարեցված պայմանագրերով վերադարձվող ապահովագրավճար	Ապահովագր ավճարների գծով Զուտ հասույթ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	41,982	(10,561)	(720)	30,701
Առողջության ապահովագրություն	1,611,302	(721,470)	(51,255)	838,577
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	224,994	(66,228)	(9,247)	149,519
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	101,021	(7,659)	(71)	93,291
Գույքի ապահովագրություն	85,532	2,233	(215)	87,550
Ավտո պատասխանատվություն	9,615	(53)	(31)	9,532
Ընդհանուր պատասխանատվություն	26,728	84,849	(669)	110,908
Երաշխիքի տրամադրում	94,240	(51,618)		42,622
Ֆինանսական վնասների ապահովագրություն	199	(171)		28
Աջակցության ապահովագրություն	48,925	5,128	(151)	53,902
ԱՊՊԱ	1,966,126	(111,508)	(94,947)	1,759,670
Ընդամենը	**4,210,664**	**(877,058)**	**(157,306)**	**3,176,300**

31.03.2022թ դրությամբ

ՀՀ դրամ

Ապահովագրության դասեր	2023 թ կնքված պայմանագրերով նախատեսված համախառն ապահովագրավճար	ՉԱՊ-ի համախառն փոփոխություն	Դադարեցված պայմանագրերով վերադարձվող ապահովագրավճար	Ապահովագր ավճարների գծով Զուտ հասույթ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	31,461	(3,777)	(386)	27,298
Առողջության ապահովագրություն	1,674,247	(988,895)	(45,939)	639,414
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	137,386	8496	(27,618)	118,263
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	93,153	(3,744)	(132)	89,277
Գույքի ապահովագրություն	80,092	6,178	(223)	86,047
Ավտո պատասխանատվություն	5,523	(294)	(15)	5,214
Ընդհանուր պատասխանատվություն	38,145	94	(32)	38,207
Երաշխիքի տրամադրում				

Ֆինանսական վնասների ապահովագրություն	850	(734)		116
Աջակցության ապահովագրություն	31,285	(283)	(70)	30,932
ԱՊՊԱ	1,537,902	(129,116)	(82,241)	1,326,546
Ընդամենը	**3,630,044**	**(1,112,074)**	**(156,655)**	**2,361,314**

Ծանոթագրություն 6. Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ

31.03.2023թ դրությամբ

Ապահովագրության դասեր	2023 թ կնքված վերաապահովագրու-թյան պայմանագրերով նախատեսված ապահովագրավճար	ՉԱՊ-ում վերաապահովագրողի բաժնի փոփոխություն	Դադարեցված պայմանագրերի գծով ստացվելիք վերաապահովագրավճարներ	Վաստակած վերաապահովագրավճար
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(2,672)	1,402	5	(1,265)
Առողջության ապահովագրություն				
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(74,354)	24,181	2,981	(47,192)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(55,162)	3,460	12	(51,690)
Գույքի ապահովագրություն	(27,123)	(6,377)	8	(33,492)
Ավտո պատասխանատվություն		(73)		(73)
Ընդհանուր պատասխանատվություն	(16,685)	(5,241)	3,390	(18,536)
Երաշխիքի տրամադրում	(14,031)	7,760		(6,271)
Ֆինանսական վնասների ապահովագրություն				
Աջակցության ապահովագրություն				
ԱՊՊԱ				
Ընդամենը	**(190,027)**	**25,112**	**6,396**	**(158,519)**

31.03.2022թ դրությամբ

Ապահովագրության դասեր	2022 թ կնքված վերաապահովագրու-թյան պայմանագրերով նախատեսված ապահովագրավճար	ՉԱՊ-ում վերաապահովագրողի բաժնի փոփոխություն	Դադարեցված պայմանագրերի գծով ստացվելիք վերաապահովագրավճարներ	Վաստակած վերաապահովագրավճար
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(915)	(666)	148	(1,433)
Առողջության ապահովագրություն				
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(43,277)	(4,778)	12,422	(35,633)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(55,296)	6,956		(48,340)
Գույքի ապահովագրություն	(59,086)	25,790	45	(33,251)
Ավտո պատասխանատվություն		(88)	14	(74)
Ընդհանուր պատասխանատվություն	(9,246)	1,309		(7,937)
Երաշխիքի տրամադրում				
Ֆինանսական վնասների ապահովագրություն	(41)	41	1,148	1,148
Աջակցության ապահովագրություն				
ԱՊՊԱ				
Ընդամենը	**(167,861)**	**28,564**	**13,777**	**(125,520)**

Ծանոթագրություն 7 . Համախառն հատուցումներ

31.03.2023թ դրությամբ

Ապահովագրության դասեր	Ընթացիկ տարվա հատուցումներ	ՆՉՊՊ փոփոխություն	ՏՉՊՊ փոփոխություն	Համախառն հատուցումներ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(1,269)	1,119	1	(149)
Առողջության ապահովագրություն	(538,441)	81,039	3,121	(454,281)
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(74,716)	(19,929)	(2,264)	(96,909)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(7,712)	5,423	690	(1,599)
Գույքի ապահովագրություն	(2,561)	(5,136)	(267)	(7,964)
Ավտո պատասխանատվություն	(652)	423	(7)	(236)
Ընդհանուր պատասխանատվություն	(432)	855	55	478
Երաշխիքի տրամադրում				
Ֆինանսական վնասների ապահովագրություն				
Աջակցության ապահովագրություն	(1,155)	(5,941)	(443)	(7,539)
ԱՊՊԱ	(1,051,354)	6,374	16,275	(1,028,705)

Ընդամենը	**(1,678,292)**	**64,227**	**17,161**	**(1,596,904)**

31.03.2022թ դրությամբ

Ապահովագրության դասեր	Ընթացիկ տարվա հատուցումներ	ՆՉՊՊ փոփոխություն	ՏՉՊՊ փոփոխություն	Համախառն հատուցումներ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(179)	63	(6)	(122)
Առողջության ապահովագրություն	(350,135)	90,565	3,341	(256,229)
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(49,425)	20,754	193	(28,478)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(16,092)	8,876	(344)	(7,560)
Գույքի ապահովագրություն	(2,426)	(5,673)	24,456	16,357
Ավտո պատասխանատվություն	(146)	(423)	(48)	(617)
Ընդհանուր պատասխանատվություն	(669)	(228)	12	(885)
Երաշխիքի տրամադրում				
Ֆինանսական վնասների ապահովագրություն				
Աջակցության ապահովագրություն	(528)	(436)	(44)	(1,008)
ԱՊՊԱ	(808,942)	39,829	40,549	(728,564)
Ընդամենը	**(1,228,542)**	**153,327**	**68,109**	**(1,007,106)**

Ծանոթագրություն 8 . Համախառն հատուցումներում վերաապահովագրողի բաժին

31.03.2023թ դրությամբ

Ապահովագրության դասեր	Ընթացիկ տարվա հատուցումներում վերաապահովագրողի բաժին	ՆՉՊՊ վերաապահովա-գրողի բաժնի փոփոխություն	ՏՉՊՊ վերաապահովագ-րողի բաժնի փոփոխություն	Համախառն հատուցումներում վերաապահովա-գրողի բաժին
Դժբախտ պատահարներից ապահովագրություն				
Առողջության ապահովագրություն				
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	41,915	19,955	1,491	63,361
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	6,508	(3,581)	(502)	2,425
Գույքի ապահովագրություն	906	389	(6)	1,289
Ավտո պատասխանատվություն				
Ընդհանուր պատասխանատվություն	415	(597)	(41)	(223)
Երաշխիքի տրամադրում				
Ֆինանսական վնասների ապահովագրություն				
Աջակցության ապահովագրություն				
ԱՊՊԱ				
Ընդամենը	**49,744**	**16,166**	**942**	**66,852**

31.03.2022թ դրությամբ

Ապահովագրության դասեր	Ընթացիկ տարվա հատուցումներում վերաապահովագրողի բաժին	ՆՉՊՊ վերաապահովա-գրողի բաժնի փոփոխություն	ՏՉՊՊ վերաապահովա-գրողի բաժնի փոփոխություն	Համախառն հատուցումներում վերաապահով-ագրողի բաժին
Դժբախտ պատահարներից ապահովագրություն				
Առողջության ապահովագրություն				
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	32,081	(12,106)	338	20,313
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	12,969	(8,129)	228	5,068
Գույքի ապահովագրություն	1,431	2,721	(23,555)	(19,403)
Ավտո պատասխանատվություն				
Ընդհանուր պատասխանատվություն	647	188	(13)	822
Երաշխիքի տրամադրում				
Ֆինանսական վնասների ապահովագրություն				
Աջակցության ապահովագրություն				
ԱՊՊԱ				
Ընդամենը	**47,128**	**(17,326)**	**(23,002)**	**6,800**

Ծանոթագրություն 9. Զուտ եկամուտ/ծախս միջնորդավճարներից

Ապահովագրության դաս	31.03.2023թ դրությամբ	31.03.2022թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	118	115
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(182)	
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	2,209	6,039
Գույքի ապահովագրություն	370	4,123
Ավտո պատասխանատվություն		
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	297	1,806
Ֆինանսական վնասների ապահովագրություն		
Ընդամենը	**2,812**	**12,083**

Ծանոթագրություն 10. Ապահովագրական ծառայությունների գծով ծախսեր

10.1 Ապահովագրական գործակալների միջնորդավճարների գծով ծախսեր

Ապահովագրության դասեր	31.03.2023թ դրությամբ	31.03.2022թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(7,972)	(8,402)
Առողջության ապահովագրություն	(33,545)	(46,355)
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(28,970)	(21,967)
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(1,565)	(9,103)
Գույքի ապահովագրություն	(16,886)	(15,696)
Ավտո պատասխանատվություն	(3,756)	(1,568)
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	(17,847)	(7,791)
Երաշխիքի տրամադրում	(6,283)	-
Ֆինանսական վնասների ապահովագրություն	(4)	(23)
Աջակցության ապահովագրություն	(20,527)	(11,297)
ԱՊՊԱ	(244,670)	(180,302)
Ընդամենը	**(382,025)**	**(302,504)**

10.2 Այլ ապահովագրական ծախսեր

Ծախսի աղբյուրը	31.03.2023թ դրությամբ	31.03.2022թ դրությամբ
ԱՄՄՊ ծրագրի օգտագործման ծախս /ԱՊՊԱ/	(135,019)	(75,920)
ԱՊՊԱ ուղիղ հատուցումների վերջնահաշվարկից զուտ ծախս	(48,425)	(4,004)
Բանկային ծառայությունների գծով ծախսեր /ԱՊՊԱ/	(13,621)	(10,457)
Վնասների կարգավորման զուտ ծախսեր	(10,675)	(4,090)
ARMED ծրագրի օգտագործման ծախս /Առողջության ապահովագրություն/	(1,864)	(2,095)
Այլ ապահովագրական ծախսեր	(17,991)	(18,769)
Անձնակազմի գծով ծախս	(64,636)	(71,957)
Ընդամենը	**(292,231)**	**(187,292)**

Ծանոթագրություն 11. Ներդրումային եկամուտ

Ներդրումային եկամտի աղբյուրը	31.03.2023թ դրությամբ	31.03.2022թ դրությամբ
Բանկերում ներդրված ավանդների գծով	111,236	77,188
ՀՀ պետական արժեթղթերից	94,678	88,613
ՀՀ ոչ պետական արժեթղթերից	572	
Տրամադրված փոխառություններից	1,952	2,636
Այլ ներդրումներից զուտ եկամուտ/ ծախս	2,098	(3,923)
Ընդամենը	**210,536**	**164,514**

Ծանոթագրություն 12. Ֆինանսական ծախսեր

	31.03.2023թ դրությամբ	31.03.2022թ դրությամբ
Տոկոսային ծախս վարկերի գծով	(1,832)	(9,409)
Տոկոսային ծախս կնքված ռեպո համաձայանգրերի գծով	(47,378)	(36,030)
Տոկոսային ծախս ֆինանսական վարձակալության գծով	(1,973)	(2,870)
Ընդամենը	**(51,183)**	**(48,309)**

Ծանոթագրություն 13. Վարչական ծախսեր

Ծախսի աղբյուրը	Ծախսի մեծությունը	
	31.03.2023թ դրությամբ	31.03.2022թ դրությամբ
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (ներառյալ հարկեր) , արձակուրդային պահուստի ձևավորման ծախս	(261,075)	(166,560)
Հիմնական միջոցների վարձակալության գծով ծախսեր	(15,809)	(15,716)
Հիմնական միջոցների , այդ թվում՝ օգտագործման իրավունքով ակտիվի, ոչ նյութական ակտիվների մաշվածություն	(31,223)	(28,962)
Մասնագիտական ծառայություններ (Աուդիտի, խորհրդատվական, վարկանշման) ծախսեր	(23,977)	(5,752)
Շենքի վերանորոգում, սպասարկում	(342)	(372)
Գրասենյակային	(9,954)	(12,784)
Բարեգործություն	(11,500)	-
Գովազդի գծով ծախսեր	(4,653)	(2,033)
Հաշվապահական և այլ ծրագրերի սպասարկման ծախսեր	(10,355)	(7,218)
Կապ և հեռահաղորդակցություն	(4,218)	(3,882)
Բյուրոյի, հաշտարարի պարտադիր վճարներ	(4,823)	(32,190)
Բանկային, վճարահաշվարկային ծառայությունների գծով ծախսեր	(2,139)	(1,954)
Փոխադրամիջոցների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	(1,932)	(4,703)
Այլ ծախսեր, այդ թվում՝ տույժեր, տուգանքներ	(23,159)	(32,250)
Ընդամենը	**(405,159)**	**(314,376)**

Ծանոթագրություն 14. Հիմնական միջոցներ

	Շենքեր	Համակարգչային և կապի միջոցներ	Փոխադրա-միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Օգտագործման իրավունքով ակտիվ	Վարձ.հիմն. միջոց.գծով կապիտալ ներդ.	Ընդամենը
			Սկզբնական արժեք				
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	**98,800**	**189,708**	**52,391**	**218,128**	**190,188**	**50,910**	**800,125**
Ավելացում		13,935	3,417	19,624		884	37,860
Օտարում							
Վերագնահատում*			39,929				39,929
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում			(39,520)				(39,520)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	**98,800**	**203,643**	**56,217**	**237,752**	**190,188**	**51,794**	**838,394**
Ավելացում		5,304	14,000	3,285			**22,589**
Օտարում							
Վերագնահատում*							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**98,800**	**208,947**	**70,217**	**241,037**	**190,188**	**51,794**	**860,983**

			Կուտակված մաշվածություն				
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	**0**	**178,030**	**39,520**	**178,858**	**76,075**	**30,984**	**503,467**
Ավելացում	10,691	15,452	6,768	13,978	38,038	15,956	100,883
Օտարում							
Արժեզրկում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում			(39,520)				(39,520)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	**10,691**	**193,482**	**6,768**	**192,836**	**114,113**	**46,940**	**564,830**
Ավելացում	2,636	4,887	1,861	4,148	9,509	3,653	26,694
Օտարում							
Արժեզրկում							
Վերագնահատումից մաշվածության ճշգրտում							
Մնացորդը հաշվետու ամանակաշրջանի վեր ջին	**13,327**	**198,369**	**8,629**	**196,984**	**123,622**	**50,593**	**591,524**
			Զուտ հաշվեկշռային արժեք				
Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**85,473**	**10,578**	**61,588**	**44,055**	**66,566**	**1,201**	**269,461**
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**88,109**	**10,161**	**49,449**	**44,916**	**76,075**	**4,854**	**273,564**

Ծանոթագրություն 15. Ոչ նյութական ակտիվներ

	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր	Հեղինակային իրավունքներ	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ոչ նյութական ակտիվ. գծով կապիտալներդ.	Ընդամենը
			Սկզբնական արժեք			
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	**103,253**			**12,439**	**33,532**	**149,224**
Ավելացում	23,909				13,600	37,509
Օտարում	(8,815)			(180)		(8,995)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	**118,347**			**12,259**	**47,132**	**177,738**
Ավելացում				4,100	3,600	7,700
Օտարում						
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**118,347**			**16,359**	**50,732**	**185,438**
			Կուտակված մաշվածություն			
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի սկզբին	**41,674**			**3,267**	**0**	**44,941**
Ավելացում	14,411			1,270		15,681
Օտարում	(8,815)			(180)		(8,995)
Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի վերջին	**47,270**			**4,357**	**0**	**51,627**
Ավելացում	4,177			353		4,530
Օտարում						
Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**51,447**			**4,710**	**0**	**56,157**
			Զուտ հաշվեկշռային արժեք			
Հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**66,900**			**11,649**	**50,732**	**129,281**
Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**71,077**			**7,902**	**47,132**	**126,111**

Ծանոթագրություն 16. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Փայամասնակցություն ներդրումային ֆոնդում	98,215	95,614
Ընդամենը	**98,215**	**95,614**

Ծանոթագրություն 17. Վերաապահովագրական Ակտիվներ

	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Վերաապահովագրողի բաժինը ՉԱՊ-ում	23,052	23,459
Վերաապահովագրողի բաժինը ՆՉՊՊ-ում	60,656	44,490
Վերաապահովագրողի բաժինը ՏՉՊՊ-ում	10,697	9,756
Վերաապահովագրողից ստացվելիք հատուցումներ	86,848	93,848
Ընդամենը	**181,253**	**171,553**

Ծանոթագրություն 18. Տրված կանխավճարներ

Ֆինանսական ակտիվի կատեգորիա	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Գործակալներին տրված կանխավճարներ	97,485	80,220
Կանխավճարներ աշխատավարձի գծով	28,742	36,900
Այլ կանխավճարներ	49,354	32,695
Հնարավոր կորուստների պահուստ	(2,607)	(57)
Կանխավճարներ բյուջեին	**43,173**	**3,361**
Ընդամենը	**216,147**	**153,119**

Ծանոթագրություն 19. Պահանջներ բանկերի նկատմամբ

Ակտիվ	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Ռեզիդենտ բանկերին տրամադրված ընթացիկ ավանդներ	4,709,446	4,604,129
Ավանդների գծով հաշվեգրված տոկոսների մնացորդ	278,030	196,758
ՀՀ բանկերի կողմից թողարկված պարտատոմս	100,297	
Ընդամենը	**5,087,773**	**4,800,887**

Ծանոթագրություն 20. Տրամադրված փոխառություններ

	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված փոխառություններ	72,000	6,442
Ռեզիդենտ իրավաբանական անձանց տրամադրված փոխառությունների գծով ստացվելիք տոկոսներ	493	5
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ	267,384	257,693
Ռեզիդենտ ֆիզիկական անձանց տրամադրված փոխառություններ ի գծով ստացվելիք տոկոսներ	9,526	8,366
Ընդամենը	**349,403**	**272,506**

Ծանոթագրություն 21. Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր

	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Ապահովադիրներից ստացվելիք ապահովագրաճարներ	67,027	68,983
Ապահովագրական ընկերություններից ստացվելիք գումարներ	119,060	86,711
Դեբիտորական պարտքեր հատուցումների գծով	167,553	150,229
Հնարավոր կորուստների պահուստ	(33,138)	(25,977)
Ընդամենը	**320,502**	**279,946**

Ծանոթագրություն 22. Հետաձգված հարկային ակտիվ

Ընկերությունը ճանաչել է 9,676 հազար ՀՀ դրամի հետաձգված հարկային Ակտիվ, որն առաջացել Ակտիվների և պարտավորությունների ֆինանսական և հարկային բազաների տարբերություններից

Ծանոթագրություն 23. Դրամական միջոցներ և համարժեքներ

	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Բանկային հաշիվներ բանկերում	138,112	218,269
Կանխիկ դրամ ճանապարհին	60,000	
Ընդամենը դրամական միջոցներ	**198,112**	**218,269**

Ծանոթագրություն 24.Այլ ակտիվներ

	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Բռնագանձած գույք	172,100	172,100
Այլ ակտիվներ	5,523	5,467
Ընդամենը	**177,623**	**177,567**

Ծանոթագրություն 25. Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ

(Չվաստակած Ապահովագրավճարների Պահուստ՝ Ապահովագրավճարների մեթոդով հաշվարկված)

Ապահովագրության դաս	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	40,336	25,920
Առողջության ապահովագրություն	-	-
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	117,018	97,555
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	8,859	13,673
Գույքի ապահովագրություն	94,268	104,110
Ավտո պատասխանատվություն	10,116	9,531
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	114,428	181,047
Երաշխիքի տրամադրում	68,855	27,568
Ֆինանսական վնասների ապահովագրություն	81	5
Աջակցության ապահովագրություն	21,325	24,998
ԱՊՊԱ	2,308,815	2,237,978
Ընդամենը	**2,784,101**	**2,722,385**

Ծանոթագրություն 26. Պահանջների պահուստ

Ապահովագրության դաս	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	5,131	6,251
Առողջության ապահովագրություն	288,139	372,300
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	62,203	40,010
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	5,097	11,210
Գույքի ապահովագրություն	26,280	20,877
Ավտո պատասխանատվություն	171	586
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	26,097	27,007
Երաշխիքի տրամադրում		
Ֆինանսական վնասների ապահովագրություն		
Աջակցության ապահովագրություն	8,392	2,008
ԱՊՊԱ	609,871	632,520
Ընդամենը	**1,031,381**	**1,112,769**

Ծանոթագրություն 27. Ապահովագրության և վերաապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր

Պարտավորության աղբյուր	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Հատուցումների գծով վճարվելիք գումարներ	121,617	149,326
Վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ	128,573	94,141
Ընդամենը	**250,190**	**243,467**

Ծանոթագրություն 28. Այլ պարտավորություններ

Պարտավորության աղբյուր	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Աշխատավարձ, հետաշխատանքային հատուցումների գծով պարտավորություններ	89,568	73,369
Պարտավորություններ բյուջեի նկատմամբ	237,105	127,852
Ապահովագրողների բյուրոյի նկատմամբ	46,878	79,504
Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների և ապրանքների դիմաց	13,009	24,102
Պարտավորություններ ֆինանասական վարձակալության գծով	77,062	87,089
Այլ պարտավորություններ	35,499	24,244
Պարտավորությունները շահաբաժինների գծով		
Ընդամենը	**499,121**	**416,160**

Ծանոթագրություն 29. Ներգրավված վարկեր

	31.03.2023թ դրությամբ	31.12.2022թ դրությամբ
Ռեզիդենտ Բանկերից ստացված ընթացիկ վարկերի մնացորդ	65,813	
Ռեզիդենտ Բանկերից ստացված ընթացիկ վարկերի գծով տոկոսների մնացորդ	127	25
Բանկերի հետ կնքված ռեպո համաձայնագրեր	1,659,296	1,635,156
Ընդամենը	**1,725,236**	**1,635,181**

Ծանոթագրություն 30. Կապիտալ

31.03.2023թ.-ի դրությամբ Ընկերության հայտարարված և վճարված կանոնադրական կապիտալը կազմում է **1 790 000 հազար ՀՀ դրամ**:

Ծանոթագրություն 31. Տրամադրված երաշխավորություններ

31.03.2023թ դրությամբ Ընկերությունն ունի 307,903 հազար դրամի տրամադրված երաշխավորություն:

Ծանոթագրություն 32. Այլ նշումներ

ՀՀ ՊԵԿ կողմից իրականացված վերստուգման արդյունքում 22.02.2022թ-ին կազմված թիվ 30044897 ակտի 1-ին և 25-րդ կետերով փոփոխվել են 21.01.2020թ թիվ 3001813 ակտի 1-ին և 25-րդ կետերը՝ արձանագրելով, որ խախտումներ չեն հայտնաբերվել

Գործադիր տնօրեն Մանե Մարտիրոսյան

Գլխավոր հաշվապահ՝ Նադեժդա Գասպարյան